



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 1 ԱՊՐԻԼ, 2019

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 106

ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԻՒՆԸ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՆԿԵՊ

Գոհութիւն յայտնեցէք Տիրոջ՝ որովհետեւ բարի է, որովհետեւ անոր սէրը յաւերժական է:

Ո՞վ կրնայ նկարագրել Տիրոջ անչափ գորութիւնը, կամ անոր ամբողջական օրհներգութիւնը հնչեցնել: Հակառակ ատոր, Տէրը փրկեց զանոնք, որպէսզի իր անունը փառաւորուի, եւ անոնք նանչնան իր գորութիւնը:

Բայց շուտով մոռցան անոր բոլոր ըրածները, եւ մտիկ չըրին անոր տուած խորհուրդը: Անապատին մէջ ուտելիքի ցանկութեամբ բոնուեցան, եւ զԱստուած բարկացուցին ամայի այդ վայրին մէջ: Քորեք լեռան ստորոտին հորթի արձան շինեցին, եւ ձուլածոյ այդ կուտֆին երկրպագութիւն ըրին: Իրենց փառքը եղող Աստուածը, խոտակեր եզի մը պատկերով փոխարինեցին: Անոնք արհամարհեցին ցանկալի երկիրը, հաւատք չընծայելով Տիրոջ խոստումին: Անոնք Բէռի մէջ Բահաղի պաշտամունքին յարեցան, եւ անկենդան աստուածներու ընծայուած գոհեր կերան: Անոնց կուտֆերուն պաշտամունքին նուիրուեցան, ինչ որ իրենց կործանումին պատճառ եղաւ: Իրենք եւս պղծուեցան իրենց գործած արարքներով, Տիրոջ հանդէպ անհաւատարիմ գտնուեցան: Ուստի Տիրոջ բարկութիւնը բորբոքեցաւ իր ժողովուրդին դէմ: Զանոնք հեթանոս ազգերու ձեռքը յանձնեց: Բազմաթիւ անգամներ Տէրը զանոնք ազատեց, բայց անոնք կամաւորաբար ըմբոստացան անոր դէմ: Բայց Տէրը տեսաւ անոնց նեղութիւնը, լսեց անոնց աղաչանքը, յիշեց անոնց հետ կնքած իր ուխտը, եւ փոխեց իր մտադրութիւնը, որովհետեւ անսահման է իր սէրը:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Սմէնասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԹՈՐ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅԻ

2:16-37

ԻՍՐԱՅԷԼԻ ԱՆՀԱԲԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ (2:16-19)

Յաճախ կը մոռնանք, որ մեր արարքները իրենց հետեւանքները ունին: Տէրը կը շարունակէ իր պարգամները Երեմիա մարգարէին ճամբով փոխանցելու Իսրայէլի ժողովուրդին յիշեցնելով, թէ այս բոլորի պարճառը ուրիշ փեղ չփնտռել, այլ ինքն իր մէջ:

16 հմր «Մեմբացիներուն ու Տափնացիներուն փղաքները քու գլխուդ գազաթը կոտրեցին»: Արպայայտութիւն մը ըսելու համար, որ թագդ ու թագաւորութիւնդ կործանեցին: Այս բոլորի պարճառը «Քու Տէր Աստուածդ ձգելով, Ան որ քեզ կ'առաջնորդէր» (17 հմր): Ուստի Անոր ճամբան թողեցիր եւ Եգիպտացիներուն ճամբան բռնեցիր: Ճամբան բռնել կը նշանակէ անոնց կեանքի օրինակը ընդօրինակել: Առաւել եւս, Ան որ քեզի համար կեանքի ջուրի աղբիւր էր, թողեցիր եւ Սիովրի ջուրի խմելու կ'երթաս: Ինչպէս նաեւ Ասորեստանի ճամբան ու անոր գետերուն ջուրը խմելու կ'երթաս (18 հմր): Ուստի, «քու չարութիւնդ քեզ պիտի խրատէ, ու քու անհաւարարմութիւնդ քեզ պիտի յանդիմանէ» (19 հմր), հետաքրքրական է որ այս բոլորի դիմաց Տէրը Ինք չէ որ կը պարժէ, այլ Իսրայէլի կարարածը ձեռով մը առիթ պիտի ըլլայ խրատի, յանդիմանութեան, անդրադարձի, գիտակցութեան, ապաշխարութեան: Այնպէս ինչպէս պիտի ըսէ Քրիստոս. «*Ես չեկայ դարապարտելու, այլ՝ փրկելու: Ով որ կը հաւարայ պիտի փրկուի, իսկ ով որ չի հաւարար, արդէն իսկ դարապարտուած է, չհաւարայուն համար*» (Յովի 3:17-18): Ահա նոյնպէս ալ, Իսրայէլին կարարած չարութիւնը, որ ինքնին անհաւարար-մութիւն է, առիթ ըլլայ խրատի ու յանդիմանութեան: Ուստի, գիտցիր ու փես, այսինքն՝ հասկցիր, թէ որքան դառն է Տէր Աստուածդ թողելը: Դառն է գալիք դարապարտութիւնը: Ոչ միայն զԱստուած թողել, այլ նաեւ Աստուծոյ վախն ալ չկայ, որ կը նշանակէ Աստուծոյ երկիւղը, չարէն հեռու մնալը:

ԻՍՐԱՅԷԼԻ ԿԸ ՄԵՐԺԷ ՏԷՐԸ ՊԱՇՏԵԼ (2:20-25)

Անցեալին Աստուած Իսրայէլի լուծը կոտրեց ու կապանքներդ փրցուց, որ յիշեցումն է Եգիպտոսի ազատագրումին, եւ անոնք խոստացան որ օրինազանց պիտի չըլլան, բայց շուտով իրենց փրկած խոստումը մոռցան, ծռեցան, բարձր բլուրի վրայ եւ կանանչ ծառի փակ պտոնկութիւն ըրին (20 հմր): Բարձր բլուր եւ կանանչ ծառ արպայայտութիւնն է հեթանոսական պաշտամունքի: Այնքան հետաքրքրական է 21 հմրը, ուր Աստուած այնպիսի եղանակով կը մօտենայ, որպէս մարդ հարցադրումներ ընելով, եւ յիշեցնելով, թէ «քեզ իբր ընտրի որթաբունկ ու բոլորովին մաքուր սերմ փնկեր էի, ի՞նչպէս վայրենի որթաբունկի անպիտան ճիւղերու պէս եղար»: Աստուած գիտէ ինչպէս եղաւ, բայց կ'ուզէ որ մարդը ինք անդրադառնայ իր կարարածին ու գոջումով եւ ապաշխարութեամբ վերադառնայ: Ինչպիսի օճառ ալ օգտագործէ, ինչպիսի լուացում ալ ընէ Աստուծոյ աչքին բիծի պէս կը մնայ: Սա ցոյց կու տայ, թէ մարդս ի վիճակի չէ ինքզինք մաքրելու, այնպէս ինչպէս Ադամ փորձեց իր մերկութիւնը թզենիի փերեւներով ծածկել (22 հմր): Աստուծոյ աչքին մեղք է նաեւ կարարուած մեղքը չընդունիլը, մերժելը (23 հմր): Ուստի, Տէրը կը զգուշացնէ ըսելով. «որ ոտքդ չմերկանայ եւ կոկորդոջ չջորնայ»: Իսրայէլ Եգիպտացիներուն եւ Ասորեստանցիներուն ճամբան կ'երթար եւ անոնց ջուրը կ'ուզէր խմել, որպէսզի իր ծարաւը յագեցնէ, բայց ընդհակառակը, անոնց ճամբան գինք բոսիկ ձգէ եւ ծարաւի (25 հմր):

ԻՍՐԱՅԷԼ ՊԱՏԻԺԻ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ (2:26-37)

Պահը պիտի գայ որ անոնք ամենան իրենց ըրածին: Եւ ի՞նչ ըրին. «փայտին ըսին. Դուն իմ հայրս ես, ու քարին՝ Դուն զիս ծնար», բան մը որ Աստուծոյ վայել է, որովհետեւ Ինք է ճշմարիտ Հայրը, որ մեզ ծնաւ (26-27 հմր): Իսրայէլ ոչ միայն երես դարձուց, այլ՝ կռնակ: Սակայն, ամէն անգամ երբ նեղութեան մէջ ըլլան Աստուծոյ կը դիմեն ըսելով. «Ելիր ու մեզ ազատէ»: Տէրը կը յիշեցնէ. «Ո՛ր են քու շինած աստուածներդ որոնց թիւը քաղաքներուդ թիւին չափ եղան» (28 հմր), այսինքն՝ ամէն մէկ քաղաքի մէջ չաստուած մը:

Անցեալին կարարուած դէպքերն ալ օրինակ չեղան, որպէսզի անով անդրադառնային ու Աստուծոյ վերադառնային: Ընդհակառակը, առաւել եւս խորացան ու հեռացան Աստուծմէ (30 հմբ): Իսրայէլ յամառօրէն կ'ուզէ հեռանալ Աստուծմէ, առանց անդրադառնալու որ Աստուծոյ ներկայութիւնը զարդ է ինչպէս կոյսին համար զարդը որ կարեւոր է իրեն համար, կամ հարսին զօտին (32 հմբ): Սէր փնտրելու համար փոխանակ Աստուծոյ երթալու ուրիշ ճամբաներով կ'երթայ, եւ ուրիշներուն ալ կը սորվեցնէ (33 հմբ): Տակաւին, Իսրայէլին կարարածը ոչ միայն կռապաշարութիւն է կամ պոռնկութիւն, այլ նաեւ՝ ոճիր, սպաննութիւն, որովհետեւ «քղանցքներուդ վրայ անմեղ աղքատներու հոգիներուն արիւնները գրնուեցան» (34 հմբ), ոչ թէ գաղտնի տեղերու մէջ, այլ ամէն տեղ: Ահա Աստուծոյ բարկութիւնը կը բորբոքի ոչ թէ միայն կարարուածին համար, այլ՝ «ես մեղք չգործեցի ըսելուն համար» (35 հմբ): Այս ընելուն համար, «ձեռքերը գլխուն դրած», որ արտայայտութիւն է ցաւի, սուգի:

Պահապան ամենայնի Քրիստոս,
*աջ քո հոշանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*